ԱՀԱՐՈՆ ՌՈՒԾԱՆՅԱՆ
Հայաստանի ազգային պոլիտեխնիկական համալսարանի
տեղեկատվական և հեռահաղորդակցական տեխնոլոգիաների
ու էլեկտրոնիկայի ինստիտուտի տեղեկատվության
անվտանգության և ծրագրային ապահովման ամբիոնի
ծրագրային ճարտարագիտության բաժնի 4-րդ կուրսի ուսանող

ԿԻԲԵՐՀԱՆՑԱԳՈՐԾՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԿԱՆԽԱՐԳԵԼՄԱՆ ԻՐԱՎԱԿԱՌՈՒՑԱԿԱՐԳԱՅԻՆ ԸՆԴՀԱՆՐԱԿԱՆ ՀԻՄՆԱԽՆԴԻՐՆԵՐԸ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆՈՒՄ

Սույն հոդվածում տարվում է համաշխարհային սոցիալական երևույթի՝ կիբերհանցագործության վերլուծություն, որն իրենից ենթադրում է նորարար տեխնոլոգիաների ոլորտում անօրինական գործունեություն, որը վնասում է պետությունների, կազմակերպությունների և անձանց շահերին: Սույն հոդվածում առաջարկվում են կիբերանվտանգության ապահովմանն ուղղված մի շարք միջոցառումներ (օրինակ՝ տեղեկատվական առցանց հարթակի ստեղծումը), որոնք կապահովեն համեմատաբար կիբերանվտանգության բարձր մակարդակ: Հոդվածի շրջանակներում տրվում է կիբերհանցագործությունների կանխարգելման իրավակառուցակարգային հասկացությունը՝ միևնույն ժամանակ նշելով կիբերհանցավորության կանխարգելման միջազգային դոկտրինալ ելակետային խնդիրները:

***Հիմնաբառեր** - տեղեկատվական տեխնոլոգիաներ, կիբերհանցավորության կանխարգելման միջազգային դոկտրինալ ելակետային խնդիրներ, կիբերհանցագործության կանխարգելում, գաղտնիություն, կիբերանվտանգություն:*

Տեղեկատվական տեխնոլոգիաների զարգացման ներկա փուլը բնութագրվում է՝ որպես տեղեկատվական ազդեցության հնարավորություն անհատական և հասարակական գիտակցության վրա, արդյունքում՝ տեղեկատվության ազատ հասանելիությունը անխուսափելի հակակշիռ է դառնում տեղեկատվական անվտանգությանը: Այսպիսով, հաստատվում է մարդու, հասարակության և պետության իրավունքների և օրինական շահերի պատշաճ պաշտպանության անհրաժեշտությունը տվյալ ոլորտում: Տեղեկատվական անվտանգության ոլորտում արդիական է անչափահասների կողմից համացանցում տեղակայված տեղեկատվական արտադրանքի տարածման և օգտագործման խնդիրը:

Մասնավորապես, համակարգչային-տեղեկատվական առաջընթացի ամենամեծ ձեռքբերումը համացանցի (ինտերնետ) ստեղծումն էր, որը, ինչպես նշում էր «գլոբալ գյուղ» եզրույթի հեղինակ, կանադացի հայտնի փիլիսոփա՝ Մարշալ Մաքլուհանը (Marshall McLuhan). «…մարդկանց միջև անտեսում է բոլոր սահմանները՝ տարածություն, ժամանակ, մշակույթ, ավանդույթ, աշխարհայացք և այլն, որի արդյունքում աշխարհն այնքան է սեղմվում, որ կարծես դառնում է մի ամբողջ գլոբալ գյուղ[1]:»:

Համացանցն իր էությամբ տեղեկատվական միջավայր է, որի ազդեցությունը յուրաքանչյուր անչափահասի կյանքի վրա ամեն տարի մեծանում է: Համացանցը երեխաներին առաջարկում է հնարավորությունների լայն ընտրանի՝ արտահայտելու իրենց անհատականությունը, ստանալու կրթություն և այլն: Սակայն, միևնույն ժամանակ, այն իրենից վտանգ է ենթադրում՝ հասանելի դարձնելով բացասաբար ազդող տեղեկատվության, ինչպիսիք են՝ անպարկեշտ նյութերը, սեռական շահագործումն ու բռնությունը, կիբերբուլլինգը և անձնական տվյալների անհարիր կիրառումը: Ըստ ՅՈՒՆԻՍԵՖ-ի տվյալների՝ օրական ավելի քան 175.000 երեխա առաջին անգամ է մուտք գործում համացանց, այն է՝ յուրաքանչյուր կես վայրկյանը մեկ, մեկ երեխա[1]:

Տեղեկատվության զարգացման անխուսափելի հետևանքն է սոցիալական ցանցերը և մարդկանց ինտեգրումը սոցիալական ցանցերում (VKontakte, Odnoklassniki, Facebook, Twitter և այլն): Տեղեկատվության զարգացումն ունի դրական կողմ, այն է՝ ավանդական ՋԼՄ-ների միավորման համար տեղեկատվության փոխանակման նոր հնարավորություններ ստեղծելը, որոնցից շատերի մասին մի քանի տարի առաջ հնարավոր չէր, նույնիսկ, պատկերացնել, իսկ շատերն էլ, որոնց մասին հնարավոր չէ պատկերացնել այսօր, կստեղծվեն ապագայում: Միևնույն ժամանակ, դրական միտումներին զուգընթաց, կիբեր տարածքում առկա հանցավոր գործունեությունը զարգանում է և աճում: Նման հանցագործությունները ոչ միայն ծայրաստիճան եկամտաբեր են, այլև, որոշ դեպքերում, անպատիժ՝ կատարման մեթոդի առանձնահատկության պատճառով: Կառա-

վարությունները պարտավորություն ունեն իրենց քաղաքացիներին թույլ տալու անարգել մուտք գործել համացանց:

21-րդ դարում պետությունները, ֆիզիկական սահմաններից զատ, բաժանված են նաև վիրտուալ սահմաններով: **Պետական վիրտուալ տարածքը (սահմանը)**՝ ֆիզիկական (մատերիա) իրականությունից սկիզբ առնող (երբեմն էլ անկախ) և վերջինիս համար հետևանքներ առաջացնող արհեստական (սուբյեկտիվ) իրականության այն հարթակն (սուբստանց) է, որտեղ շոշափվում են պետության և հասարակության անվտանգության, սոցիալական, տնտեսական, քաղաքական, իրավական, կրոնական և մշակութային շահերը (կեցությունը), օգտակարությունը, որոնց սահմանները վերջանում են այնտեղ, որտեղ սկսվում է մեկ այլ պետության վերոնշյալ շահերի սահմանները[2]:

Ժողովրդավարական կառավարությունների պարտավորությունն է՝ մշակել օրենսդրություն և կանոնակարգեր, որոնք հնարավորություն կտան ունենալ անկախ և բազմակարծիք ՋԼՄ-ներ, տեղեկատվության ազատ հոսք առանց սահմանների, անարգել մուտք համացանց և ցանցային գրագիտության զարգացում:[2] Կառավարությունները պետք է մեծ դերակատարում ունենան, երբ խոսքը ցանցային բռնանձակության և երեխաների պաշտպանության, խտրականությունների դեմ պայքարի, ատելության և կիբերհանցագործության հրահրման մասին է: Հարցն այն չէ՝ արդյոք կառավարությունները պե՞տք է կարգավորեն համացանցը, թե՞ ոչ, այլ թե ինչպե՞ս, ի՞նչ և ի՞նչ ծավալով բռնանձակություն պետք է կարգավորվի: Արդյոք պետական կարգավորումն արդյունավե՞տ է, եթե ոչ, ապա կա՞ն այնպիսի մեթոդներ, որոնք կարող են ավելի արդյունավետ լինել:

Ամերիկյան Ազգային անվտանգության ծառայության [3] համակարգերից մեկը, որը կոչվում է Boundless Informant, թույլ է տալիս տեսնել, թե որ երկրից ինչ քանակությամբ տվյալներ են գողացվել վերջին 30 օրվա ընթացքում: Ըստ Է. Սնոուդենի 2013 թվականին տրամադրած քարտեզի՝ Հայաստանն այդ պահին բավականին մեծ հետաքրքրություն է ներկայացրել ամերիկյան գործակալության համար, քան հարևան Վրաստանը կամ Աղրբեջանը: Իսկ Red October կոչվող վիրուսային համակարգը, որը, ամենայն հավանականությամբ, կապ ուներ Չինաստանի հետ, լրտեսում էր բազմաթիվ երկրների պետական կառույցներին: Ըստ Կասպերսկի լաբարատորիայի կողմից կատարված հետազոտության՝ Հայաստանը համարվում է ամենավարակված երկրներից մեկը:[4]

2000 թվականին Ավստրիայում կայացած ՄԱԿ-ի՝ Հանցագործության կանխարգելման և իրավախախտողների հետ վարվելու համաժողովում տրվել է կիբերհանցագործության հետևյալ բնորոշումը. «Կիբերհանցագործությունն ընդգրկում է ցանկացած հանցագործություն, որը կատարվում է համակարգչային համակարգի կամ ցանցի օգնությամբ, համակարգչային համակարգի կամ ցանցի շրջանակներում, կամ համակարգչային համակարգի կամ ցանցի դեմ:»:

Այդ համաժողովում առանձնացվել է նաև կիբերհանցագործության երկու կատեգորիա՝ կիբերհանցագործություն նեղ իմաստով, որն ընդգրկում է համակարգչային համակարգի և համակարգչային տեղեկատվության անվտանգության դեմ ուղղված արարքները, և կիբերհանցագործություն լայն իմաստով (հանցագործություններ, որոնք կապված են համակարգչի օգտագործման հետ), որն ընդգրկում է համակարգչային համակարգի կամ ցանցի միջոցով կատարվող ցանկացած հանցավոր արարք կամ կապված է դրա հետ, ինչպես նաև՝ հարակից հանցանքները:[5]

Ժամանակակից համակարգչային վիրուսները բարդ ծրագրեր կամ նույնիսկ ծրագրային համակարգեր են, գրված համակարգչային չարագործների կողմից և օգտագործվում են վերոնշյալ նպատակով, սակայն կիրառվում են շատ ավելի կատարյալ եղանակներով, ինչն անչափ դժվար է դարձնում դրանց դեմ պայքարը: Սակայն, կիբերհանցագործությունները միայն ծրագրերի տարածումը կամ օգտագործումը չեն:

ՀՀ քրեական օրենսգրքի 24-րդ գլուխը քրեական պատասխանատվություն է սահմանում այն բոլոր հանցագործությունների համար, որոնցով կարող է վտանգվել տեղեկատվական համակարգերի անվտանգությունը, այն է՝ համակարգչային տեղեկատվության համակարգ առանց թույլտվության մուտք գործելը (ներթափանցելը), համակարգչային սաբոտաժը, համակարգչային տեղեկատվությանն ապօրինի տիրանալը և այլն: [6]

ՀՀ քրեական օրենսգրքի վերոնշյալ գլխում նկարագրված հանցակազմերն առավելագույնս ներառում են համակարգչային տեղեկատվության դեմ կատարվող հանցագործությունների տեսակները: Սակայն, չի կարելի մոռանալ տեխնիկական առաջընթացի սրընթաց տեմպերի մասին. այս պարագայում կարևորվում է օրենսդրի և իրավակիրառ մարմնի կապը, որն անչափ կարևոր է տվյալ տեսակի հանցագործությունների արդյունավետ բացահայտման համար:

Այս ամենին զուգընթաց, կարևորվում է միջազգային համագործակցությունը, քանի որ կիբերհան-

ցագործությունների վերջին տարիներին զարգացման միտումների ուսումնասիրությունները ցույց են տալիս, որ տարեցտարի ավելանում են անդրսահմանային բնույթ կրող հանցատեսակները: Այսպես՝ համակարգչային հարձակում կազմակերպողը կարող է գտնվել որևէ եվրոպական երկրում, օգտագործել որևէ ասիական երկրում վարակված համակարգիչների խումբ և գրոհ կազմակերպել լատինաամերիկյան որևէ պետությունում գտնվող, իրեն հետաքրքրող համակարգչային համակարգի վրա, որի արդյունքում՝ հնարավոր կլինի հափշտակել գումարներ չորրորդ երկրում գտնվող բանկից: Նմանատիպ հանցատեսակները վերջին տարիներին լայն տարածում են ստացել ամբողջ աշխարհում:

Վերը նշվածին հարկ է ավելացնել նաև ՀՀ քրեական օրենսգրքի հետևյալ հոդվածները, որոնք առավել հաճախակի կատարվում են համակարգչային տեղեկատվական համակարգերի օգնությամբ՝ հափշտակությունը, որը կատարվել է համակարգչային տեխնիկայի օգտագործմամբ, անձնական կամ ընտանեկան կյանքի մասին տեղեկություններ ապօրինի հավաքելը, պահելը, օգտագործելը կամ տարածելը, երեխային պոռնկության կամ պոռնոգրաֆիական բնույթի նյութեր կամ առարկաներ պատրաստելու հետ կապված գործողություններ կատարելուն ներգրավելը և այլն:[7]

Այսօր վիրտուալ և ֆիզիկական փոխներթափանցման հարցը կիբերանվտանգության դաշտում արդիական է, այն պատճառով, որ տեղի է ունենում վիրտուալ ու ֆիզիկական աշխարհների փոխներթափանցում. քանի որ վիրտուալ աշխարհում ծավալվող գործունեությունը կարող է լուրջ ազդեցություն գործել ֆիզիկական աշխարհի վրա՝ ինչպես նպաստելով, այնպես էլ՝ էապես խաթարելով պետության բնականոն գործունեությանը: Կիբերհամակարգերից ռազմական և տնտեսական գործունեության կախվածությունը պետությունների համար ստեղծում է խոցելի կողմեր, ինչից կարող են օգտվել միջազգային հարաբերություններում ոչ պետական մասնակիցները, ինչպես նաև որոշ պետություններ: Հատկապես, լուրջ վտանգ է ներկայացնում միջուկային զենքի կիբերապահովվածության հարցը:

Այսպիսով՝ կիբերտարածությունը դարձել է ազգային և միջազգային անվտանգության դեմ ուղղված սպառնալիքների հիմնական աղբյուրներից մեկը, քանի որ արդի տեխնոլոգիական զարգացման պայմաններում կիբերտարածությունում հարձակման բազմաբնույթ հնարավորություններն ավելի լայն են, քան՝ պաշտպանությանը:[8] Քանի որ ժամանակակից աշխարհում հասարակական և պետական գործունեության մի զգալի մասն իրականացվում է հեռահաղորդակցության դաշտում, ուստի անչափ հրատապ է դառնում կիբերհանցագործության և կիբերահաբեկչության խնդիրը: Այսօր կիբերհանցագործությունը լուրջ վտանգ է ներկայացնում պետության էներգահամակարգերին, օդային փոխադրումներին և նույնիսկ միջուկային օբյեկտներին: Նշված վտանգներից ապահովագրված չէ նաև Հայաստանի Հանրապետությունը: Հաշվի առնելով մեր երկրի աշխարհաքաղաքական դիրքը՝ կիբերհանցագործությունները կարող են լուրջ սպառնալիք ներկայացնել Հայաստանի Հանրապետության ազգային անվտանգությանը: Վերջին տարիներին անցկացվել է կիբերհանցագործության դեպքերի տվյալների վերլուծությունը, որի արդյունքները ներկայացնենք գրաֆիկի տեսքով (Գրաֆիկ 1)[9]



Գրաֆիկ 1. Կիբերհանցագործությունների դեպքերը ՀՀ 2018-2019թթ.

Թվային աշխարհում կիբերհանցագործություններից պաշտպանվելու պարտավորությունը բոլորինն է՝ կառավարություններինը, ընտանիքներինը, դպրոցներինն ու այլ հաստատություններինը: Բայց նաև մասնավոր հատվածը, հատկապես՝ տեխնոլոգիաների և հեռահաղորդակցության ոլորտները, կարևոր և յուրահատուկ պարտավորություն ունեն թվային տեխնոլոգիաների՝ հասարակության վրա թողած ազդեցությունը ճնավորելու հարցում. պարտավորություն, որ մինչ այժմ լուրջ չի ընդունվել:

Մասնավոր հատվածի ուժն ու ազդեցությունը պետք է օգտագործվի, որպեսզի բարելավվեն ոլորտի տվյալների ու գաղտնիության էթիկական նորմերը և ծավալվի այնպիսի գործունեություն, որ կպաշտպանի առցանց հարթակում գտնվող երեխաների շահերը: Փորձագետների շրջանում չկան կիբերանվտանգության խնդրի նկատմամբ միասնական մոտեցումներ: Սակայն, կիբերանվտանգություն ապահովելու համար առաջարկվում են մի քանի մեթոդներ՝

1. Համակարգել համաշխարհային, տարածաշրջանային և ազգային արձագանքը: Մենք պետք է ուժեղացնենք քաղաքականություն մշակողների, իրավապահ մարմինների և SS ոլորտի միջև համագործակցությունը, որպեսզի տեխնոլոգիական արտադրանքի ստեղծման ընթացքում ներդրվեն անվտանգության նորմեր /սկզբունքներ/ և միասին աշխատենք, որպեսզի վերջ դնենք թրաֆիքինգին, ինչպես նաև՝ մարդկանց /մասնավորապես՝ երեխաների/ շահագործման առցանց այլ միջոցներին:

2. Երաշխավորել մարդկանց տվյալների գաղտնիությունը: Մասնավոր հատվածի ու կառավարության կողմից ավելի մեծ հանձնառություն է անհրաժեշտ քաղաքացիների տվյալների պաշտպանության և տեղին օգտագործման հարցում: Առցանց տվյալները հավաքագրելիս և օգտագործելիս պետք է հաշվի առնել և կիրառել միջազգային նորմերը: Իսկ քաղաքացիներին /մասնավորապես՝ երեխաներին/ պետք է սովորեցնել, թե ինչպես պաշտպանվել այն ամենից, ինչը վտանգում է իրենց տվյալների գաղտնիությունը:

3. Հասարակությանը զինել առցանց հարթակում՝ ապահովելով հասանելի թվային գրագիտությամբ: Նաև կառավարությունների ու SS ոլորտի մասնագետների ավելի սերտ համագործակցությամբ պետք է ստեղծվեն ՏՀՏ հարթակներ և այնպիսի դասացուցակ, որպեսզի կրտսեր դպրոցից մինչև ավագ դպրոցի աշակերտները սովորեն ճիշտ օգտվել առցանց հարթակում տեղադրված նյութերից և չվտանգեն իրենց անձնական տվյալները: Առցանց գրադարանները պետք է բարելավվեն, իսկ հանրային գրադարանները պետք է վերազինվեն, որպեսզի թվային հմտություններ սովորեցնող դասեր անցկացվեն: Քաղաքացիներին /մասնավորապես՝ երեխաներին/ պետք է սովորեցնել տարբերակել ու զգուշանալ առցանց վտանգներից և ոչ ստույգ տեղեկատվությունից, իսկ թվային քաղաքացիությունն էլ դարձնել թվային գրագիտության կենտրոնական բաղադրիչ:

4. Գնահատել մասնավոր հատվածի յուրահատուկ դերը: SS ոլորտում պետք է ներդնել ու պարտադրել տվյալների և գաղտնիության էթիկական նորմեր, որոնք պաշտպանում են առցանց հարթակում գտնվող անձանց շահերը, այդ թվում՝ այնպիսի էթիկական պրոդուկտի ստեղծում և տարածում խրախուսել, որ կնվազեցնի հասարակությանն ուղղված ռիսկերը:

5. Ներդնել այնպիսի լուծումներ, որոնք տեղեկություն կտրամադրեն առցանց հարթակում գտնվող երեխաների, համացանցի առաջարկած հնարավորությունների և հնարավոր վտանգների մասին: Մեզ ավելի շատ տեղեկություն է հարկավոր առցանց հարթակում գտնվող երեխաների ու նրանց գործունեության մասին, որպեսզի կարողանանք այդ տվյալները կիրառել կարգավորող այնպիսի նորմերում ու քաղաքականություններում, որոնք կճանաչեն երեխաների հատուկ կարիքներն ու իրավունքները: Թվային աշխարհի մարտահրավերները հաղթահարելու համար պետք է համաշխարհային մակարդակում ուժեղացնել համակարգումն ու տեղեկատվության փոխանակումը: Պետք է ուժեղացնել համագործակցությունը երեխաների հարցերով զբաղվող կազմակերպությունների հետ և կանոնավոր կերպով համագործակցել օրինապահ մարմինների ու քաղաքականություն մշակողների հետ: [1]

Հաշվի առնելով վերը նկարագրված հիմնախնդիրները՝ կիբերհանցագործություններից խուսափելու և կիբերհանցագործությունների քանակը նվազեցնելու նպատակով՝ առաջարկվում է ստեղծել առցանց հարթակ, որը կազմված կլինի չորս հիմնական մասերից: Առաջին մասում կլինի տեղեկատվություն կիբերհանցագործությունների, դրանց կատարման մեթոդների ու հաճախականությունների մասին, երկրորդ մասում տեղադրված կլինի մանրամասն տեղեկատվություն, թե ինչպես խուսափել տարատեսակ կիբերհանցագործություններից, օրինակ՝ ինչպիսի գաղտնաբառեր օգտագործել կայքերում, որպեսզի բարձրացնել անձնական տվյալների պաշտպանվածության մակարդակը, քանի որ «թույլ» կամ օգտատերերի կողմից հաճախ օգտագործվող գաղտնաբառը հնարավորություն է տալիս կիբերհանցագործին մուտք գործել օգտատիրոջ անձնական կայք և վերցնել կամ խախտել անձնական տվյալների ճշտությունը: Հարթակի երրորդ մասում կլինեն օրենքների կետեր, թե ինչպիսի արարքներն են քրեորեն պատժելի:

Չորրորդ մասում կլինի անանուն հարցում կազմված մի քանի հարցերից՝ օգտատիրոջ սեռը, տարիքը, մասնագիտությունը, որքա՞ն ժամանակ է անց կացնում համացանցում, հանդիպե՞լ է երբևէ կիբերհանցագործության, եղե՞լ է արդյոք կիբերհանցագործության զոհ: Այս հարցումը հնարավորություն կընձեռի հավաքել տեղեկատվություն կիբերհանցագործությունների մասին և կազմել անընդհատ թար-

մացվող վիճակագրություն:

Այսպիսով, կիբերհանցավորությունը վերացնելու, ինչպես նաև կիբերհանցագործության զոհ չդառնալու ամենապարզ ուղիներից մեկը սովորելն է, թե ինչպես պաշտպանվել առցանց միջավայրում և ինչպես չլինել կիբերհանցագործների հեշտ թիրախ:

Ամփոփելով վերոգրյալը՝ գտնում ենք, որ կիբերհանցագործությունների կանխարգելումը, դա պետության վիրտուալ տարածքում (սահմանում) ֆիզիկական և իրավաբանական անձանց, ինչպես նաև պետության իրավունքներն ու օրինական շահերը պաշտպանելու նպատակով՝ իրավական, սոցիալական, ռազմական և տնտեսական անհրաժեշտ կառուցակարգերի ստեղծումն ու գործարկումն է, որոնց միջոցով պետությունը կարողանում է բացահայտել, կանխել և պատիժ կիրառել (սանկցիա կիրառել) կիբերհանցավորության նկատմամբ:

Միևնույն ժամանակ, գտնում ենք, որ կիբերհանցագործությունների կանխարգելումը պետք է խարսխված լինի ներքոհիշյալ միջազգային դոկտրինալ ելակետային խնդիրների վրա՝ միջազգային վիրտուալ տարածքի կարգավորման համընդհանուր նորմատիվների սահմանում, միջազգային փոխգործակցություն կիբերհանցավորության բացահայտման՝ կանխման (սանկցիավորման) պատժամիջոցների կիրառելու նպատակով, միասնական տեղեկատվատեխնիկական անվտանգության համակարգերի ստեղծում ու գործարկում, խոցելի խմբերի իրավունքների և օրինական շահերի պաշտպանության գերակայություն միջպետական շահերի նկատմամբ (օրինակ՝ մանկական պոռնոգրաֆիայի տարածման դեմ միջազգային պայքար՝ անկախ պետական և խմբային, ֆինանսական կամ այլ շահերից) և այլն:

[1] Հայրապետյան Ա. «Սիգրացիոն իրավունքը միջազգային իրավական դոկտրինայում և պրակտիկայում», «Արդարադատություն» գիտական հանդես (2016-4(35), էջ 24, հղում՝ 3-րդ և 4-րդ: https://ardaradatutyunjournal.com/wp-content/uploads/2018/12/35-2016-4.pdf

[2] Հայրապետյան Ա. «Սիգրացիոն իրավունքը միջազգային իրավական դոկտրինայում և պրակտիկայում», «Արդարադատություն» գիտական հանդես (2016-4(35), էջ 24: https://ardaradatutyunjournal.com/wp-content/uploads/2018/12/35-2016-4.pdf

Օգտագործված գրականության ցանկ

1. ՅՈՒՆԻՍԵՖ-ի 2017թ. «Երեխաների իրավիճակն աշխարհում. երեխաները թվային դարում» https://www.unicef.org/armenia/%D5%B4%D5%A1%D5%B4%D5%B8%D6%82%D5%AC%D5%AB-%D5%B0%D5%A1%D5%B2%D5%B8%D6%80%D5%A4%D5%A1%D5%A3%D6%80%D5%B8%D6%82%D5%A9%D5%B5%D5%B8%D6%82%D5%B6/%D6%85%D6%80%D5%A1%D5%AF%D5%A1%D5%B6-%D5%A1%D5%BE%D5%A5%D5%AC%D5%AB-%D6%84%D5%A1%D5%B6-175000-%D5%A5%D6%80%D5%A5%D5%AD%D5%A1-%D5%A1%D5%BC%D5%A1%D5%BB%D5%AB%D5%B6-%D5%A1%D5%B6%D5%A3%D5%A1%D5%B4-%D5%BD%D5%AF%D5%BD%D5%B8%D6%82%D5%B4-%D5%A7-D6%85%D5%A3%D5%BF%D5%BE%D5%A5%D5%AC-%D5%B0%D5%A1%D5%B4%D5%A1%D6%81%D5%A1%D5%B6%D6%81%D5%AB%D6%81%D5%9D,(վերջին անգամ դիտվել է 03.04.2020)
2. Դեհերյան Ս., Ղազարյան Ա., Մարտիրոսյան Ս., Դարբինյան Ս. «Կիբերտիրույթ տեղեկատվական անվտանգություն և իրավունք»:
3. Ամերիկյան Ազգային անվտանգության ծառայության Boundless Informant /https://www.nsa.gov/ (վերջին անգամ դիտվել է 03.04.2020):
4. «Կասպերսկի» լաբորատորիայի կիբերսպառնալիքների վերլուծություններ և արդյունքներ (վերջին անգամ դիտվել է 03.04.2020) https://securelist.com/red-october-diplomatic-cyber-attacks-investigation/36740/:
5. Tenth United Nations Congress on the Prevention of Crime and the Treatment of Offenders Vienna, 10-17 April 2000,Report of the Tenth United Nations Congress on the Prevention of Crime and the Treatment of Offenders, Paragraph 161-174,էջ 26:
6. Հայաստանի Հանրապետության քրեական օրենսգիրք https://www.arlis.am/documentView.aspx?docid=69646 (վերջին անգամ դիտվել է 03.04.2020)
7. Կիբերհանցագործությունների դեմ պայքարի առանձնահատկությունները, մոտեցումները և սահազանգերին արձագանքումը https://www.police.am/news/view/%D5%AF%D5%AB%D5%A2%D5%A5%D6%80%D5%B0%D5%A1%D5%B6%D6%81%D5%A1%D5%A3%D5%B8%D6%80%D5%AE%D5%B8%D6%82%D5%A9%D5%B5%D5%B8%D6%82%D5%B6%D5%B6%D5%A5%D6%80%D5%AB-%D5%A4%D5%A5%D5%B4-%D5%BA%

D5%A1%D5%B5%D6%84%D5%A1%D6%80%D5%AB-%D5%A1%D5%BC%D5%A1%D5%B6%D5%B1%D5%B6%D5%A1%D5%B0%D5%A1%D5%BF%D5%AF%D5%B8%D6%82%D5%A9%D5%B5%D5%B8%D6%82%D5%B6%D5%B6%D5%A5%D6%80%D5%A8-%D5%B4%D5%B8%D5%BF%D5%A5%D6%81%D5%B8%D6%82%D5%B4%D5%B6%D5%A5%D6%80%D5%A8-%D6%87-%D5%A1%D5%B0%D5%A1%D5%A6%D5%A1%D5%B6%D5%A3%D5%A5%D6%80%D5%AB%D5%B6-D5%A1%D6%80%D5%B1%D5%A1%D5%A3%D5%A1%D5%B6%D6%84%D5%B8%D6%82%D5%B4%D5%A8.html (վերջին անգամ դիտվել է 03.04.2020):
8. Քարդումյան Վ.Գ. Կիբերանվտանգությունը որպես ազգային անվտանգության կարևոր բաղադրիչ http://tert.nla.am/archive/NLA%20AMSAGIR/Haykakan%20Banak/2012%284%29.pdf (վերջին անգամ դիտվել է 03.04.2020)
9. Կիբերհանցագործությունների դինամիկան Հայաստանում https://infocheck.am/am/posts/235?fbclid=IwAR3_2dudQEqpfTE0D9Oz37lMPRgvHkZsOjnJfIGQ77JAoo8A-L1xRBqTc6E (վերջին անգամ դիտվել է 03.04.2020).

Аарон Рушанян
Студент 4-го курса отдела инженерии программного обеспечения,
кафедры информационной безопасности и программного обеспечения
института информационных и телекоммуникационных технологий
и электроники Национального политехнического университета Армении

РЕЗЮМЕ

Общие вопросы правовой структуры для предотвращения киберпреступности в Республике Армении

В этой статье анализируется такое глобальное социальное явление, как киберпреступность, т.е. незаконные действия в области инновационных технологий, которые наносят ущерб Республике Армении, интересам организаций и физических лиц. В данной статье предлагается ряд мер кибербезопасности, таких как создание онлайн информационной платформы, которая обеспечит относительно высокий уровень кибербезопасности. В статье рассматривается правовая основа для предотвращения киберпреступности, в то же время отмечаются международные доктринальные проблемы предотвращения киберпреступности.

***Ключевые слова**: информационные технологии, международные доктринальные проблемы предотвращения киберпреступности, киберпреступление, секретность, кибербезопасность.*

Aharon Rushanyan
4th year student of the Chair of Software Engineering,
Department of Information Security and Software Development
of the Institute of Information and Telecommunication Technologies
and Electronics of the National Polytechnic University of Armenia

SUMMARY

General issues of legal structures for preventing cybercrime in the Republic of Armenia

This article describes the analysis of global social phenomenon as cybercrime - illegal deployment in areas of technological innovation, which cause damage to the Republic of Armenia, interests of organizations and persons. Here it is suggested a variety of cybersecurity, such as creating an online information platform, which will provide high level of cybersecurity. The article provides the legal basis for preventing cybercrime, while at the same time, international doctrinal problems of preventing cybercrime are noted.

***Key words**: Information technology, International Doctrinal Issues in Preventing Cybercrime, cybercrime, privacy, cybersecurity.*

Ընդունվել է տպագրության 28.04.2020թ.
Հոդվածը երաշխավորել է տպագրության (գրախոսել է)
իրավաբանական գիտությունների թեկնածու, դոցենտ Դ. Թումասյանը